ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 9-Ա

«14» փետրվարի 2023 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ /ԲՆԱԿԱՎԱՅՐ ԶՈՐԱԿԵՐՏ ԳՅՈՒՂ ԴԱՐԻԿ/ «ԱԳՐՈՀՈԼԴԻՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԱՆԱՍՆԱՇԵՆՔ, ԱՐՏԱԴՐԱՄԱՍ, ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ) ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ԿԱՐԳՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «գ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1023-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի դրույթներով և հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած **«ԱԳՐՈՀՈԼԴԻՆԳ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը իր 2023 թվականի հունվարի 16-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված 2509,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով, **2345,1** քառակուսի մետր ներքին մակերեսով գյուղատնտեսական արտադրական նշանակության շինությունը (գործառնական նշանակությունը՝ անասնաշենք, արտադրամաս, օժանդակ շինություն) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-039-0009-0004 կադաստրային ծածկագրով **0,51874** հեկտար մակերեսով հողամաս (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, բնակավայր զորակերտ գյուղ դարիկ 2-րդ փողոց, 3 անասնաշենք) ուղղակի

վաճառքով գնման նախապատվության իրավունքը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանին

Որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը համարված արտաքին 2509,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով, **2345,1** քառակուսի մետր ներքին մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության շինությունը (գործառնական նշանակությունը՝ (անասնաշենք, արտադրամաս, օժանդակ շինություն) և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության 08-039-0009-0004 կադաստրային ծակագրով **0,51874** հեկտար մակերեսով հողամասը (հասցեն՝ մարզ Շիրակ, Ամասիա համայնք, բնակավայր Զորակերտ գյուղ Դարիկ 2-րդ փողոց, 3անասնաշենք) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի միջոցով օտարելու «Ագրոհոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (գրանցման համար 46.100.00007, հարկ վճարողի հաշվառման համար՝05900058):

2. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

   ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «գ» ենթակետի համաձայն ինքնակամ կառուցված արտադրական նշանակության կառույցների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Զորակերտ բնակավայրի համար սահմանված 0.0456 գործակցի կիրառմամբ 2509,4 քառակուսի մետր արտաքին մակերեսով **(անասնաշենք, արտադրամաս, օժանդակ շինություն** վաճառքի գինը կազմում է՝
   2509,4 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.0456 = 2288573 (երկու միլիոն երկու հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր յոթանասուներեք) Հայաստանի Հանրապետության դրամ:
   բ) Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների նշանակության ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Զորակերտ բնակավայրում սահմանված է 92,4 Հայաստանի Հանրապետության դրամ, շինության պահպանման ու սպասարկման համար

նախատեսված 5187,4 քառակուսի մետր մակերեսով հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է՝
5187,4 քառ. մետր X 92,4 դրամ = 479316 (չորս հարյուր յոթանասունինը հազար երեք հարյուր տասնվեց) Հայաստանի Հանրապետության դրամ:
Սահմանված չափերով ձևավորված շինության և հողամասի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝
2767889(երկու միլիոն յոթ հարյուր վաթսունյոթ հազար ութ հարյուր ութսունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավար՝ Ջեմմա Հարությունյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

4. Որոշումն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին այն անձանց առձեռն կամ օրենքով սահմանված այլ կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից, որոնց ուղղված է ակտը, եթե օրենքով այլ կարգ սահմանված չէ :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 8 *Դեմ՝ 0* *Ձեռնպահ՝ 0*

Հարությունյան Ջ.
Ղուկասյան Ա.
Ախցխեցյան Է.
Մարդոյան Գ.
Աբրահամյան Ն.
Զաքարյան Հ.
Արսենյան Ջ.
Գևորգյան Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«14» փետրվարի 2023 թվական
գյուղ Ամասիա